ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. հուլիսի 20 թիվ 73 - Ա

ՊԱՐԳԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 163-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Պարգև Համբարձումյանին տրամադրել իր ամենամյա նվազագույն արձակուրդի մասն ու լրացուցիչ արձակուրդը՝ 2010 թվականի դեկտեմբերի 18-ից 2011 թվականի դեկտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 14 աշխատանքային օր տևողությամբ, 2012 թվականի օգոստոսի 1-ից օգոստոսի 20-ը ներառյալ:

Հիմք՝ Պ. Համբարձումյանի 2012 թվականի հուլիսի 20-ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն վճարել նաև լրացուցիչ արձակուրդային վճար՝ ամսական միջին աշխատավարձի չափով:

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ